ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ ՀԱՐԿԱՅԻՆ ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԵՏ

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄ

«17» ապրիլի 2014թ. N 4

«ՇԱՀՈՒԹԱՀԱՐԿԻ ՄԱՍԻՆ» ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ 32-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 2-ՐԴ ՄԱՍԻ ԿԻՐԱՌՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

«Շահութահարկի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի (այսուհետ՝ Օրենք) 32-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն վարկային կազմակերպությունների, բանկերի, ապահովագրական ընկերությունների, վերաապահովագրական ընկերությունների, ապահովագրական միջնորդային գործունեություն իրականացնող անձանց, արժեթղթերի շուկայի մասնագիտացված անձանց, գրավատների, արտարժույթի առք ու վաճառքի և արտարժույթի դիլերային-բրոքերային առք ու վաճառքի, մետաղական օգտակար հանածոների արդյունահանման և (կամ) մետաղի խտանյութի արտադրության (վերամշակման), վառելիքաէներգետիկ հումքի արդյունահանման և (կամ) արտադրության (վերամշակման) գործունեություն իրականացնող անձանց, հեռահաղորդակցության (էլեկտրոնային հաղորդակցության) բնագավառում (բացառությամբ տվյալների հաղորդման և ինտերնետ հասանելիության ծառայությունների մատուցման) լիցենզավորված գործունեություն իրականացնող անձանց՝ գործունեության այդ մասով ստացած եկամուտների, ինչպես նաև ստացվող այլ եկամուտների դիմաց շահութահարկի գումարը հաշվարկվում է հարկվող շահույթի նկատմամբ 20 տոկոս դրույքաչափով:

Ստեղծված իրավիճակում տարաբնույթ են ընկալվում Օրենքի նշված դրույթը՝ այդ անձանց կողմից գործունեության այլ տեսակների մասով ստացած եկամուտների դիմաց շահութահարկի դրույքաչափի կիրառման առումով:

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 88-րդ հոդվածով, ***պաշտոնապես պարզաբանում եմ***.

1. «Շահութահարկի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի 2-րդ մասում նշված անձանց՝ այդ օրենքին համապատասխան ստացած բոլոր եկամուտները (բացառությամբ տվյալների հաղորդման և ինտերնետ հասանելիության ծառայությունների մատուցումից, առևտրի հարկով կամ հաստատագրված վճարներով հարկվող գործունեությունից ստացած եկամուտների) հարկվում են շահութահարկի 20 տոկոս դրույքաչափով:

2. Տվյալների հաղորդման և ինտերնետ հասանելիության ծառայությունների մատուցումից ստացված եկամուտները հարկվում են շահութահարկի 10 տոկոս դրույքաչափով:

3. Առևտրի հարկով կամ հաստատագրված վճարներով հարկվող գործունեությունից ստացած եկամուտները հարկվում են «Առևտրի հարկի մասին» և «Հաստատագրված վճարների մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքներով սահմանված կարգով և չափով:

Հ/Ծ 1-ԻՆ ԴԱՍԻ ՊԵՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱԿԱՆ **Ա. ԲԱԼԱՅԱՆ**